


ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԼԵԶՎՈՒՄ

ԼՈՒԻԶԱ ՄԵԼԿՈՆՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում անդրադարձ է կատարվել նոր բառերի առանձնացման տարբեր սկզբունքներին՝ համադրելով նորաբանությունների մասին լեզվաբանության մեջ տիրապետող տարբեր տեսակետները ինչպես հայ, այնպես էլ օտարազգի (հիմնականում ռուս) լեզվաբանների աշխատություններում: Այնուհետև առանձնացվել են նորաբանությունների առաջացման լեզվական և արտալեզվական գործոնները, ինչպես նաև լեզվի անվանողական համակարգի կատարելագործմանն ուղղված այն միտումները, որոնք նպաստում են նորաբանությունների երևան գալուն:

Փորձ է արված բազմաթիվ տեսակետներից առանձնացնելու նոր բառերի ամենաբնորոշ ու համակողմանի սահմանումը՝ տարբերակելով *նորաբանություն* և *նորակազմություն* տերմինները, որոնք հաճախ միարժեք չեն սահմանվում կամ երբեմն նույնացվում են: Քննվող լեզվական միավորները՝ բառերը, միավորվել են *նորաբանություններ* միասնական տերմինի ներքո:

Այսպիսով՝ նորաբանությունների ստեղծման հիմք են լեզվում գործառող զանազան նոր երևույթները, ինչպես՝

- հին բառերին նոր որակներ հաղորդելը,
- բառակերտման նոր միջոցները,
- բառակազմական առկա կաղապարներով նոր բառեր ստեղծելը,
- լեզվական միավորի տնտեսման միտումը,
- ընդհանրացման, կանոնարկման միտումը (միանման երևույթներին, առարկաներին, հասկացություններին ընդհանուր անվանում տալու ձգտումը),
- կանոնավորման, ընդհանրացման միտումին որպես հակակշիռ գործառում է նաև տարբերակման (дифференциация), ճշգրտման միտումը,

արդեն հայտնի երևույթներին հուզարտահայտչականություն հաղորդելը:

Լուիզա Մելկոնյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ

Луиза Мелконян – кандидат филологических наук, ассистент кафедры армянского языка ЕГУ

Luiza Melkonyan – Candidate of Philological Sciences, Assistant at YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ melkonyanluiza@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0000-3791-9174>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 28.10.2024

Գրախոսվել է՝ 01.11.2024

Հաստատվել է՝ 06.11.2024

© The Author(s) 2024

Բանալի բառեր – բառապաշար, նորակազմություն, լեզվական և արտալեզվական գործոններ, դիպվածային բառ, բառակերտում, բառակազմական կադրապար, կանոնարկում, լեզվական միավորի տնտեսում, հուզարտահայտչականություն

Յուրաքանչյուր կենդանի լեզու բարդ, շարունակ փոփոխվող մի համակարգ է: Լեզվի այս շարունակական փոփոխելիության արդյունքում այն անընդհատ զարգանում է ու կատարելագործվում: Լեզվի՝ որպես համակարգի նման հարափոփոխ հատկության արտահայտություններից մեկն էլ նոր միավորներով նրա բառային կազմը համալրելն է, որը տեղի է ունենում նոր բառերի՝ նորաբանությունների հաշվին: Հայ լեզվաբանության մեջ բառագիտության քննությանը նվիրված շատ աշխատություններ կան¹, որոնցում, ընդհանուր առմամբ, նորաբանություններ են դիտվում լեզվական այն միավորները (բառեր, դարձվածքներ, արտահայտություններ), որոնք փոխառվում կամ ստեղծվում են լեզվի զարգացման տվյալ փուլում կենսունակ բառակազմական եղանակներով կամ էլ բառերի իմաստների փոփոխության ու զարգացման ճանապարհով՝ նոր առարկաներ, երևույթներ, հասկացություններ արտահայտելու համար, և որոնց նորաստեղծ լինելը գիտակցվում է խոսողի կողմից:

Նորաբանագիտության կարևորագույն հիմնախնդիրներից է որոնել-գտնել նոր բառերի երևան գալու պատճառները, ինչպես նաև այն շարժիչ ուժերը, որոնք պայմանավորում են լեզվի այդ բնական առաջընթացը: Մակայն այդ «նոր»-ի բնորոշումները լեզվաբանական գրականության մեջ հաճախ հանգեցրել են տարբեր ըմբռնումների: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Այսպես, ոմանք նոր բառը դիտում են իբրև ոճաբանական կատեգորիա՝ բառի ընկալման մեջ կարևորելով «նորի զգացողությունը». ըստ այդմ՝ «նորաբանությունները բառեր են կամ արտահայտություններ, որոնց թարմությունն ու անսովորությունն ակնհայտորեն զգում են տվյալ լեզվակիրները»²: Ոմանք նորաբանություն են դիտում այն բառերը, որոնցով անվանվում են նոր իրակություններ՝ կապված գիտության, տեխնիկայի առաջընթացի հետ, որպես «...բառ կամ դարձվածք՝ ստեղծված (ծագած) նոր (նախկինում անհայտ) առարկա անվանելու կամ նոր հասկացություն արտահայտելու համար»³: Կամ՝ որպես «...նոր բառեր կամ նոր դարձվածային կապակցություններ, որոնք լեզու են մտել պայմանավորված ոչ միայն գիտության ու տեխնիկայի վերելքով, այլև հասարակական հարաբերությունների զարգացմամբ կամ փոփոխությամբ»⁴, կամ էլ

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, Ս. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ, Եր., 1955:

² Большая советская энциклопедия (այսուհետև՝ БСЭ), М., 1974, т. 17.

³ Ахманова О. С. Словарь лингвистических терминов, М., 1966.

⁴ БСЭ, М., 1954, նաև՝ Энциклопедический словарь, М., 1954.

որպես «...նոր բառ կամ նոր իմաստով բառ՝ կապված գիտության զարգացման և նոր հասկացությունների ի հայտ գալու հետ»⁵, կամ՝ «...նոր ժամանակներում հանդես եկած բառ կամ դարձված, որ կա՛մ դեռ համընդհանուր գործածություն չունի, կա՛մ գիտակցվում է իբրև նոր»⁶: Ակնհայտ է, որ բնորոշումներում նորաբանության ընկալման մեջ գերակայում է ոչ միայն արտալեզվական գործոնը, այլև ոճականը՝ «նորի զգացողությունը»:

Թվում է, թե հիմնախնդիրը կարելի է հեշտ լուծելի համարել՝ հիմնվելով լեզվաբանական գրականության մեջ ընդունված այն տեսակետի վրա, որ բառապաշարային փոփոխություններն առավելապես պայմանավորված են արտալեզվական գործոններով: Բիարկե, այս դիտարկումն ընդունելի է, սակայն միշտ չէ, որ բառապաշարային փոփոխություններն ուղղակիորեն կախված են արտալեզվական գործոններից: Որովհետև միշտ չէ, որ նորը կյանքում կապված է լեզվում (առավել ևս գրական լեզվում) նոր բառերի ի հայտ գալու հետ: Նոր իրակությունները կարող են անվանվել նաև հին բառերով ու բառերի կապակցություններով:

Ինչպես տեսանք, բնորոշումները տարարժեք են, որոնցում առկա է նորաբանության (լայն առումով) միակողմանի ընկալումը: Այս առումով տեղին է Բ. Գոլովինի այն միտքը, որ «նորաբանություն հասկացությունը պատմական է ու հարաբերական»⁷, և հենց այդ է նրա առանձնահատկությունը: Սա նշանակում է, որ նորաբանություն ասվածը պետք է դիտարկվի համաժամանակյա ընկալման մեջ: Այս տեսակետից ավելի համակողմանի բնորոշում է այն, որ նորաբանությունները «բառեր են, բառերի նշանակություններ կամ բառերի կապակցություններ, որոնք որոշակի ժամանակահատվածում ի հայտ են եկել որևէ լեզվում կամ կիրարկվել են մեկ անգամ (պոտենցիալ բառեր) ինչ-որ տեքստում կամ խոսողության գործընթացում»⁸:

Ուստի կարելի է ասել, որ նորաբանության ըմբռնման առաջին ճշգրտող գործոնը ժամանակայինն է: Հեռուստատեսության գյուտին (անցյալ դարի 50-ական թթ.) առնչվող բոլոր բառերը նորաբանություն էին նախորդ երեք-չորս տասնամյակ առաջ ստեղծվածների համեմատությամբ: Այսօր էլ նոր են այդ «հին» արմատատարրով բաղադրված *հեռուստախանութ*, *հեռուստաբանավեճ*, *հեռուստաբորսա*, *հեռուստանովել*, *հեռուստամարաթոն* ևն բառերը:

Հաջորդ ճշգրտող գործոնը բառի կիրառության լեզվական տարածքն է, այսինքն՝ որ ոլորտներում ու ժանրերում է այն գործառում: Որովհետև տվյալ գրական լեզվի բառային կազմի փոփոխությունները պայմանավորված են բառապաշարի տարբեր շերտերի շարունակական ներթափանցումներով, և շատ կարևոր է, թե

⁵ Словарь терминов по информатике на русском и английском языках, М., 1971.

⁶ Ֆ. Խլիշայան, Ոճաբանական բառարան, Եր., 2000:

⁷ Головин Б. Н. Общее языкознание. М., 1966, с. 91.

⁸ Лингвистический энциклопедический словарь. М., 1990.

որտեղ, որ շերտում է այն նոր դիտվում՝ ընդհանրապես լեզուներում, տվյալ ազգային լեզվում, գրական լեզվում, տվյալ ենթալեզվում (նկատի ունենք, ասենք, վերջերս տարբեր տերմինահամակարգերում ի հայտ եկած այնպիսի բառեր, որոնք նոր են միայն տվյալ համակարգի համար, ինչպես իրակ (մաթ.) իրակություն (реалия), բազմ (մաթ.) բազմություն (множество), գլոր (մարզ.) գլորում (накат):

Ճշգրտող հաջորդ գործոնն է՝ պարզել, թե նորաբանություն հասկացության ներքո *ինչն է նորը*: Այս առումով հարկ է դիտարկել մեզանում գործառող *նորաբանություն* և *նորակազմություն* տերմինները, որոնք հաճախ միարժեք չեն սահմանվում կամ երբեմն նույնացվում են: Հենց սկզբից փաստենք, որ նորաբանությունն ավելի լայն ընդգրկում ունի, իսկ նորակազմությունը նրա մասնավոր դրսևորումներից է⁹: Քննվող լեզվական միավորները՝ բառերը, մենք միավորել ենք *նորակազմություններ* միասնական տերմինի ներքո: Բանն այն է, որ լեզվաբանության մեջ **նորաբանություն, դիպվածային և պոտենցիալ բառեր** տերմինների մասին ցայսօր տիրապետող են տարբեր ըմբռնումներ: Լայն առումով նորաբանություն են լեզվում գործառող նոր իրողությունները: Նեղ առումով դրանք «լեզվի բառային համակարգի այն նոր միավորներն են, որոնք առաջացել են նոր առարկա անվանելու կամ նոր հասկացություն արտահայտելու հասարակական պահանջմունքից, և որոնք գործառում են խոսքում որպես պատրաստի, վերարտադրելի միավորներ»¹⁰:

Ժամանակակից հայոց լեզվի նորակազմություններում մենք առանձնացնում ենք երկու կարգ՝ նորաբանություններ և օկազիոնալիզմներ՝ դիպվածաբանություններ (վերջիններս բառակազմական մակարդակում բաժանվում են պոտենցիալ և դիպվածային բառերի): Դիպվածաբանություն տերմինը լայնորեն գործառում է լեզվաբանական գրականության մեջ (անգլ.՝ occasional word, ֆր.՝ mot occasionnet, գերմ.՝ okkasioneles Wort, իսպ.՝ palabra occasional), սակայն դիպվածային բառերի ընդհանրական սահմանում չկա: Այսպես, Ն. Շանսկին դիպվածաբանությունները չի ճանաչում իբրև բառեր՝ հիմք ընդունելով դրանց անվերարտադրելիությունը. «Դրանք բառային ձևությամբ հասկացություններ են, որոնք գոյություն ունեն այս կամ այն համատեքստում որպես որոշակի նորմատիվ միավորներ և դրանով իսկ օժտված չեն լեզվական ստանդարտի ցանկացած միավորին բնորոշ հիմնական հատկությամբ՝ վերարտադրելիությամբ»¹¹: Վ. Լոպատինն առանձնացնում է «դիպվածային և պոտենցիալ բառեր և դիպվածային բառեր, որոնք գոյություն չունեն լեզվական ավանդույթում, հետևաբար, այնպիսիք, որոնք ստեղծվում են խոսողության ընթացքում, երբ մնացած

⁹ Ի դեպ, ռուսերենում և եվրոպական լեզուներում գործառում են համապատասխանաբար неология և новообразование, անգլ. neologism և neology, ֆրանս. neologisme և neologie տերմինները: Հայերեն *նորաբանություն* տերմինի տակ փոստորեն ըմբռնվում է թե՛ неология-ն, որը «գիտությունն է նորի մասին», թե՛ неологизм-ը՝ նորակազմություն-ը, որը համարժեք է նաև новообразование-ին:

¹⁰ **Виноградов В. В.** Словообразование в его отношении к грамматике и лексикологии / Исследования по русской грамматике. М., 1975, с. 16-17.

¹¹ **Шанский Н. В.** Очерки по русскому словообразованию. М., 1968, с. 161.

բոլոր բառերը խոսողության ընթացքում վերստեղծվում, վերարտադրվում են որպես պատրաստի միավորներ»¹²:

Մեզանում դիպվածային և պոտենցիալ բառերի խնդրին անդրադարձել է Թ. Ղարազյուլյանը¹³՝ դրանք քննելով հայոց լեզվի բառաստեղծական ընդհանուր գործընթացի տեսանկյունից: Նա դիպվածային բառերը համարում է նորաբանություններ, սակայն տարբերում է բուն կամ համագործածական նորաբանություններից: Ըստ նրա՝ «պատկանելով լեզվի կիրարկությանը, այսինքն՝ միայն խոսքին՝ դիպվածային բառերը հանդես են գալիս որպես *խոսքի* բառային միավորներ, բայց ոչ *լեզվի* և պայմանավորված են խոսքային տվյալ իրադրությամբ» (էջ 202): Դիպվածայինները հիմնականում համարում է բառ(եր)ի համաբանական կազմություններ՝ հականիշ եզրերի ստեղծմամբ (հմմտ. տնավերվեմ-տնավորվեմ): Տարբերում է երկու կարգի դիպվածայիններ՝ ա) որոնց կազմությունը թեև համապատասխանում է հայերենի բառակազմական կադապարներին, սակայն կազմվել են բաղադրիչների անսովոր համադրությամբ (հմմտ. սիրադուլ, տատենական), բ) որոնք կազմվում են հայերենի բառակազմական կադապարներին անհամապատասխան ձևերով (արտակադապարային բառեր) (հմմտ. քեզապաշտներ, ամենամիակ): Մտեղծվում են նաև դիպվածային հապավումներ (հմմտ. մասնուս – մասնավոր ուսումնական տարի), հարադրական բարդություններ (հմմտ. գիտնական-հովիվ, էքս-դիմորդ): Քննելով պոտենցիալ բառերը՝ հեղինակը գտնում է, որ դրանք «թեև չեն մտնում լեզվի բառային կազմի մեջ, սակայն նրանց առաջացումը և կիրառումը պատկանում է լեզվին և ապահովվում է բառային ամբողջ համակարգով ու բառակազմական օրինաչափություններով» (էջ 214): Հեղինակը այն կարծիքին է, որ ամեն նորակազմություն նորաբանություն չէ, եթե չի անվանում նոր երևույթ (հմմտ. դեղի սրվակ – դեղասրվակ, վարձի չափ – վարձաչափ): Հավելենք, որ նման տարաբաժանումը պատճառաբանված կլինի միայն այն դեպքում, երբ տվյալ միավորները քննվեն բառակերտման համակարգում: Պոտենցիալ բառերն ստեղծվում են արդյունավետ բառակազմական կադապարներով, իսկ դիպվածայինները՝ նվազ արդյունավետ, անարդյունավետ, դիպվածային կադապարներով: Նոր բառերի բառակազմական առանձնահատկությունները քննելիս մենք հաշվի ենք առել կադապարների արդյունավետությունը, սակայն դրան էական նշանակություն չենք տվել՝ չսահմանազատելով դիպվածայինները պոտենցիալներից:

Ընդհանուր առմամբ, դիպվածային բառերի վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալ բնութագրումները՝ 1. անհատական վերաբերմունքի աճ,

¹² Лопатин В. В. Рождение слова: неологизмы и окказиональные образования. М., 1973, с. 70-71.

¹³ Տե՛ս Թ. Ղարազյուլյան, Դիպվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծական համակարգում // Լեզվի և ոճի հարցեր, № 7, Եր., 1983 (էջերը նշվում են շարադրանքում՝ մեջբերումից հետո):

զնահատողական վերլուծական իմաստների մեծ դեր, 2. առավելապես հեզնական իմաստով կիրառություններ, 3. գոյական հիմքով հարաբերական ածականների ստեղծում, 4. բառակերտման հաճախականության տեսակետից բայերը երրորդ տեղում են (գոյականներից ու ածականներից հետո):

Այսպիսով, ինչպես տեսանք, նորաբանությունների մասին լեզվաբանության մեջ տիրապետող են տարբեր ըմբռնումներ: Ի մի բերելով վերոնշյալը՝ մենք նորաբանություն ենք համարում լեզվում գործառող զանազան նոր երևույթները, ինչպես՝

1. *հին բառերին նոր որակներ հաղորդելը.*

ա) բառի տերմինացումը՝ *կառույց* (հս.-քղք.),

բ) բառարաններում «հնց», «մսնգ.» հղումով բառերի թարմացումը կամ անցումը մեկ այլ տերմինահամակարգ՝ *գործատու, անհանգստություն* (հոգեբ.<դվնգտ.),

գ) խոսակցական շերտից բառերի անցումը ոճական չեզոք շերտ կամ հակառակը՝ *օպտիմալացում*՝ որեն (գրք.),

դ) ոճական հականիշության առաջացումը՝ *իշխանություն-ընդդիմություն.*

2. *բառակերտման նոր միջոցները.*

ա) անցումը բայական բառույթի վերլուծական կազմություններից համադրականի՝ *իրազեկ դարձնել - իրազեկել,*

բ) բառակապակցության բառայնացումը՝ լրիվ կամ լրացուցիչ կառուցվել՝ *լրակառուցվել*, բնական պաշար՝ *բնապաշար,*

գ) բառակապակցության կրճատումը՝ երթուղային տաքսի՝ *երթուղային,*

դ) բայական բառակապակցությունից գոյական անցումը՝ *հետ կանչել* (բայ) - *հետկանչ* (գոյ.),

ե) բառահատումը՝ մաթեմատիկա՝ *մաթեմ.*

3. *բառակազմական առկա կադապարներով նոր բառերի ստեղծումը՝*

ա) ածանցմամբ՝ գեր+խանութ՝ *գերխանութ,*

բ) բառաբարդմամբ՝ քայլ+արշավ՝ *քայլարշավ*, համակարգիչ+հեն՝ *համակարգչահեն,*

գ) հապավմամբ՝ զանգվածային լրատվամիջոցներ՝ *ՁԼՄ,*

4. փոխառությունն ու պատճենումը՝ *մարտավարություն, մենեջեր, տեսա-հոլովակ, մտածելակերպ* (հմմտ. մենթալիտետ)¹⁴:

Ամենին հակված չլինելով սահմանելու արտալեզվական և ներլեզվական գործոնների տեսակարար կշիռը վերոնշյալ գործընթացներում՝ փաստենք, որ

¹⁴ Բառապաշարի նորաբանական զարգացման այս համատեքստում ուշագրավ են Հայագիտական միջազգային համաժողովում Լ. Եզեկյանի կողմից առաջադրված դրույթները (տե՛ս Լ. Եզեկյան, Արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման ուղիները, Հայագիտական միջազգային համաժողովի դրույթներ, Եր., 2003, էջ 121-122):

արտալեզվական գործոնների դերն առավել տեսանելի է, քան ներլեզվականներինը¹⁵: Ներլեզվական գործոններով պայմանավորված նորաբանությունները չեն անվանում նոր առարկա կամ հասկացություն. դրանք կիրառվում են լեզվում արդեն գործառող իրակություններն անվանելու համար, որոնք նախկինում անվանվել են կա՛մ նկարագրորեն (հմմտ. օգտատեր (տեխն.)՝ նախկին՝ օգտագործող տերը), կա՛մ լեզվում հայտնի առանձին բառով (հմմտ. այր-«պաշտոնյա», այր-«տղամարդ»): Ուստի նրանք պակաս նկատելի են, իսկ հաճախ նաև դժվարհայտնաբերելի:

Նկատենք, որ ներհամակարգային նորակազմավորումները բազմազան են ինչպես իրենց բնույթով, այնպես էլ իրենց գործառույթային հատկանիշներով: Հարկ է նկատել նաև, որ լեզվի բառապաշարային ենթահամակարգի ներսում ընթացող ինքնակա գործընթացները, որոնք ուղղված են անվանողական համակարգի կատարելագործմանը, վերջին հաշվով միջնորդավորված են արտաքին ազդակներով՝ մասնավորապես՝ հասարակական նշանակության երևույթներին, հասկացություններին հնչեղություն հաղորդելով: Սա էլ առիթ է գործի դնելու լեզվական այն մեխանիզմը, որը ձգտում է արդեն հայտնի հասկացությանը հաղորդել լեզվական համակարգի տվյալ վիճակին հարմար նշանակություն, որը կհամապատասխանի նրա ժամանակակից զարգացման այս կամ այն միտումներին: Այսպիսով՝ արտաքին միտումները կարծես «ձևավորում են» ներլեզվական գործոնները:

Դիտարկենք լեզվի անվանողական համակարգի կատարելագործման այն միտումները, որոնք նպաստում են նորաբանությունների երևան գալուն:

1. *Լեզվական համակարգի բառակազմական հնարավորությունների շնորհիվ բառային նորամուծությունների* (հմմտ. նորակազմությունների, лексическая инновация) զգալի մասն է հայտ է գալիս՝ վերանվանելու (трансноминация) արդեն հայտնի հասկացությունները: Մինչև ի հայտ գալը նման նորակազմություններն ասես գոյություն են ունենում պոտենցիալ վիճակում: Այսպես, ունեցել ենք *միություն, շարժում, երթ, ընկերություն, աստղ, եզր* ևն բառերը, որոնք վերջին տասնամյակում տվեցին իրենց ածանցյալները՝ հարստացնելով մեր լեզվի բառային կազմը, ինչպես՝ *համամիություն* (հմմտ. կորպորացիա), *համաշարժում, համերթ, գերընկերություն, գերաստղ, փոխեզր* ևն: Այսպիսով՝ ժամանակին ինքնուրույնություն ստացած այս կամ այն լեզվական միավորները բառակազմական նոր շարքերի (կադապարների) հիմք են:

2. *Լեզվական տնտեսման*¹⁶ միտումը, որը նոր լեզվական միավորների ստեղծման բավականին հզոր ներլեզվական գործոն է: Մրա էությունն այն է, որ խոսողության ընթացքում ընտրվում են հաղորդակցությունն ապահովող

¹⁵ Հմմտ. Վ. Համբարձումյան, Լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների մասին, ՀԼԳԳ, Եր., 1978:

¹⁶ Տերմինը պատկանում է անվանի լեզվաբան Օ. Եսպերսենին, իսկ Ա. Մարտինեն երևույթն անվանում է «լեզվական ջանքերի տնտեսման օրենք»:

առավել արդյունավետ «կադապարներ»: Ինչպես իրավամբ նշում է Ե. Ռոզենը, «սա պատշաճում է ժամանակակից հանրության՝ տեքստը կրճատելու միջոցով նրա տեղեկատվական ունակությունը մեծացնելու մշակութային ձգտմանը, այնպես էլ տպագիր արտադրանքի տարածքի ու բանավոր հաղորդման տևողության տնտեսման որոշակի իրատեսական ցանկությանը»¹⁷: Նշվածի վառ արտահայտությունն է կայուն բառակապակցությունների կրճատում-փոխարինումը միաբառ, ձևով առավել հակիրճ անվանումով, որը նոր չէ նաև հայերենի բառակերտման օրինաչափությունների մեջ (տե՛ս և հմմտ. հեծյալ գորք>հեծելագոր, թիկնապահ գորք>թիկնագոր), ինչպես՝ զինված ուժեր>*զինուժ* (ռազմ.), պատճենահանող սարք>*պատճենասարք* (տեխն.), լրացուցիչ վճար>*լրավճար* (տնտես.) ևն:

Լայնորեն կիրառվում է նաև լեզվական միավորների տնտեսման բառատեղծական մեկ այլ երևույթ՝ հապավումը, որի շնորհիվ զգալիորեն ընդարձակվում է ներհամակարգային նորակազմությունների քանակը: Թեև հապավական բաղադրությունների անվանողական արտահայտչականությունը հաճախ զիջում է նույն հասկացության բառային անվանմանը, բայց և այնպես դրանք կրճատում են խոսքային նշանների «տարածքը»: Հապավական բաղադրություններով (հատկապես՝ տառային ու վանկաբառային) հարուստ է մանավանդ վերջին տասնամյակի լեզուն, ինչպես՝ ՄԱԱ (մամուլի ազգային ակումբ), ՓԲԸ (փակ բաժնետիրական ընկերություն), ԴՈԻՇ (դաշնադրային ուժերի շտաբ), *արտգործնախարար, ~ություն, ֆիննախարար, ~ություն* ևն:

Փաստորեն կատարվում է իմաստային վերափոխում (семантическая трансформация)՝ շնորհիվ իմաստի խտացման: Այսպիսով՝ հաղորդակցման գործընթացը տնտեսելու նպատակով որևէ հասկացության վերանվանումն իրականացվում է ոչ միայն նոր բառերի, այլև լեզվում արդեն գործառող բառույթների նոր նշանակություններ հաղորդելու միջոցով:

Բառային մասնատվածության վերացումը հանգեցնում է խոսակցական ու մասնագիտական բառապաշարում իմաստաբանական մի իրողության, երբ բառի բաղադրիչների իմաստները կարծես խտանում են բաղադրիչներից մեկում, ինչպես՝ *երթուղային* < երթուղային տաքսի, *ուժային*, ~ներ < ուժային նախարարություն կամ այդ կառույցի աշխատակից, *գործադիր* < գործադիր մարմին, ~իշխանություն, *ասուլիս* < մամուլի ասուլիս, *վերաքաղ* < գիտելիքների վերաքաղ (տե՛ս կրկնողություն. հատուկ է հոգևոր կրթօջախների բառապաշարին), *շարժում* < ընդդիմադիր համազգային շարժում (տե՛ս շարժման օրեր, ~մասնակից), *եռօրյա* < եռօրյա նիստ (ԱԺ առաջին եռօրյայի օրակարգում) ևն:

Այս երևույթը կայունանում է նաև բաղադրյալ անվանումներում, ինչպես՝ *երկրապահ* < Երկրապահ կամավորականների միություն, ~անդամ, *Արդարություն* < Արդարություն դաշինք:

¹⁷ Гулыга Е. В., Розен Е. В. Новое и старое в лексике и грамматике немецкого языка. Л., 1977, с. 65.

Նման կազմությունների պատճառն այն է, որ խոսողը ձգտում է պարզեցնել ասելիքը, իսկ խոսակցի համար էլ էական է ասելիքի դյուրընկալելիությունը: Հավելենք, որ այս բառաձևերը էական դեր են խաղում ժամանակակից խոսակցական լեզվում, ինչպես նաև մամուլի ու հրապարակախոսության բնագավառում, այսինքն՝ խոսքային հաղորդակցության այն ոճերում, որտեղ սեղմ շարդրանքի կարիքը խիստ զգալի է:

Իմաստաբանական այս իրողությունը արտահայտման ձևով նման է *փոխանունությունը* (մետոնիմիա): «Փոխանունություն է բառակապակցության մեկ անդամի գործածությունը նաև մյուս անդամի փոխարեն. այսպիսի գործածության ժամանակ բառակապակցությանը փոխարինող բառն արտահայտում է ն իր, և՛ փոխարինված բառի իմաստը... Փոխանունությունը լրացյալի արտահայտումն է լրացումով»¹⁸ (հմմտ. մի գավաթ սուրճ խմեց – մի գավաթ խմեց): Ըստ էության երկու դեպքում էլ գործ ունենք բառակապակցության համառոտման, բառակապակցություն - բառ անցման իրողության հետ: Մակայն, կարծում ենք՝ նմանությունն առկա է զուտ արտահայտչական պլանում: Նախ՝ առաջին դեպքում գործ ունենք կայուն բառակապակցության հետ (հմմտ. երթուղային տաքսի), երկրորդ դեպքում՝ ազատ բառակապակցության (հմմտ. մի գավաթ սուրճ): Այս հանգամանքով պայմանավորված էլ առկա են տարբեր իրողություններ. որովհետև *երթուղային* ասելով՝ հաստատապես հասկանում ենք *երթուղային միկրոավտոբուսը*, իսկ *մի գավաթի* պարագայում կրճատված մասը կհասկացվի միայն համատեքստում: Ուստի իմաստային վերափոխման՝ ձուլման այս երկու դրսևորումները նույնական են արտահայտության պլանում, սակայն տարբեր են բովանդակայինում:

3. Նոր երևույթ չանվանող նորաբանությունների ի հայտ գալուն նպաստում է նաև *ընդհանրացման միտումը*, միանման երևույթներին, առարկաներին, հասկացություններին ընդհանուր անվանում տալու ձգտումը: Այսպես, պատկերն ու ձայնը ձայնագրելու զանազան սարքերին՝ *տեսախցիկ, ձայնագրիչ, տեսամագնիստոֆոն* են, տրվել է *տեսատեխնիկա* ընդհանրացնող անվանումը, հարդարանքի առարկաներին ու միջոցներին՝ *կոսմետիկա*, իշխանության ոչ գործադիր մարմիններին՝ հասարակական, արհմիութենական կազմակերպություններին՝ *ոչ կառավարական, ոչ պաշտոնական* ընդհանրացնող անվանումը, լոգարանն ու զուգարանը՝ *սանհանգույց*, դրանք նորոգելու, ձևավորելու սարքերին՝ *սանտեխնիկա* են:

Ընդհանրացման միտում առկա է ոչ միայն բառային, այլև իմաստային պլանում: Այս առումով ուշագրավ դիտարկում ունի Դ. Շմելյովը¹⁹: Նա նշում է, որ իմաստային ընդհանրացումը տվյալ դեպքում արտահայտվում է այն բա-

¹⁸ Է. Աղայան, Բառագիտություն / Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 227-229:

¹⁹ Տե՛ս Шмелев Д. Н. О некоторых тенденциях развития современной русской лексики / Развитие лексики современного русского языка. М., 1965, էջ 11:

նով, որ ստեղծվում են անվանումներ, որոնք հանդես են գալիս որպես իմաստային դաշտի այս կամ այն բառաիմաստային հարացույցի տեսակային հասկացությունները տարբերակված իմաստներով համաչափորեն հատվածավորելու ընդհանրացումներ:

4. Կանոնավորման, ընդհանրացման միտումին որպես հակակշիռ գործառուում է նաև *տարբերակման* (дифференциация), *ճշգրտման միտումը*, որը դրսևվորվում է՝ ա) երբ լեզվի զարգացման տվյալ փուլում նույնանիշները ձեռք են բերում իմաստի և կիրառության նրբին տարբերություններ՝ վերածվելով տերմինային հոմանիշների (հմմտ. *խումբ - խմբակցություն, հասարակություն - հանրություն, հասարակական - հանրային*), և բ) երբ նույն հասկացության դիմաց վերանում կամ ճշգրտվում է տերմինային հոմանիշությունը՝ երբեմն այդ շարքը համալրելով նորակազմ տերմիններով (հմմտ. *սրբաբանություն - 1. ընթացակարգ (քղք.), 2. արարողակարգ (հս.-քղք.), 3. բուժակարգ (բժշկ.)*):

Տարբերակման, ճշգրտման՝ որպես նորաբանությունների առաջացման այս միտումի մասին ուշագրավ դիտարկում ունեն ռուս լեզվաբաններ Ս. Վոլկովը և Ե. Սենկոն²⁰: Տարբերակման, ճշգրտման արդյունքում բառի իմաստային դաշտի ներսում տեղի է ունենում որոշակի իմաստային ճշգրտում՝ նույն հասկացության շրջանակներում մասնավորեցնելով յուրաքանչյուր առանձին տեսակը: Սա հանգեցնում է նոր, առավելապես բարդ բառերի ստեղծմանը, որոնք ճշգրտում են արդեն առկա ընդհանուր հասկացությունները, ինչպես՝ բժիշկ > բժիշկ-կենսաբան, բժիշկ-վարակազետ, դիմում > դիմում-բողոք, դիմում-նամակ, դիմում-զանգաստ, ինտերնետ-սրճարան, խանութ-սրահ, տուն-ինտերնատ²¹: Հարկ է նշել, որ բառակազմական նման կաղապարների առաջացման անհրաժեշտությունը պայմանավորվել է գիտության, տեխնիկայի, արտադրության զանազան ոլորտների մասնագիտացմամբ, հանգամանք, որն

²⁰ Տե՛ս **Волков С. С., Сенько Е. В.** Неологизмы и внутренние стимулы языкового развития /Новые слова и словари новых слов. Л., 1983, էջ 52-53:

²¹ Նման կազմությունները լեզվաբանական գրականության մեջ նաև կոչվում են *բինոմներ*՝ երկու անվանման կազմավորումներ (հմմտ. ֆրանս. bloc-eau «սանհանգույց», bloc-fumcur «մոխրաման և հրահան ավտոմեքենայում», diner-debat «ճաշ-քննարկում», billet-cadeau «տոմս-նվեր», ռուս. краманипулятор, команда-жест, парк-выставка): Բինոմներում բաղադրիչների սերտաձման աստիճանը տարբեր է. հաճախ նրանց շարահյուսական համարժեքը բացահայտիչ-բացահայտյալ բառակապակցությունն է, սակայն երբեմն բինոմը բառայնացվում է՝ վերածվելով բարդ բառի: Ընդ որում՝ բինոմի առաջնաբաղադրիչը կամ վերջնաբաղադրիչը սկսում է լայնորեն համադրվել այլ բառերի հետ՝ ստեղծելով արդյունավետ կաղապարներ (հմմտ. *դիմում-բողոք, դիմում-զանգաստ, դիմում-կոչ, դիմում-նամակ, ֆրանս. livre-cadeau «գիրք-նվեր», papier-cadeau «թուղթ-փաթեթ*): Որոշ լեզվաբաններ (մասնավորապես՝ Պ. Ժիլբերը) այս իրողությունը բացատրում են այն հանգամանքով, որ բինոմի բաղադրիչներից մեկը վերացարկվում է և հարմարեցվում նախածանցի կամ վերջածանցի դեր կատարելուն: Պ. Ժիլբերը նման առաջնաբաղադրիչներն անվանում է «նախածանցակերպներ» կամ «կեղծ նախածանցներ», իսկ վերջնաբաղադրիչները՝ «վերջածանցակերպներ» կամ «կեղծ վերջածանցներ» (տե՛ս **Gilbert P.**, Dictionnaire des mots nouveaux, P., 1971):

Էլ առիթ է դարձել երևույթի, գործողության, մասնագիտության ևն ընդհանրական անվանումը (հմմտ. բժիշկ կամ կենսաբան) փոխարինելու առանձին՝ ճշգրտված անվանմամբ (հմմտ. բժիշկ-կենսաբան):

5. Նորաբանությունների առաջացման ներքին ազդակներից է նաև արդեն հայտնի երևույթներին հուզարտահայտչականություն հաղորդելը ինչպես սեփական, այնպես էլ փոխառյալ կամ պատճենյալ բառերով: Հաղորդակցման գործընթացի մասնակիցները հաճախ ձգտում են արդեն հայտնի բառերի իմաստային դաշտը հարստացնել փոխաբերական-ընդհանրացնող նշանակություններով, ինչը խոսքին հաղորդում է թարմություն ու արտահայտչականություն: Այդպիսիք են, օրինակ, տարբեր փուլերում ի հայտ եկած բառերը, ինչպես՝ *բջիջ* - «կուսակցության փոքրագույն միավորը», *գարկերակ* - «կենսական օդակ, միտում, տեմպ, ռիթմ» (դարի~, կյանքի~), *մարաթոն* - «որևէ բանի տևական ընթացք» (ընտրական~), *ուղեգիր* - «ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի համար հետագա զարգացումն ուղենշող հանգամանք» (կյանքի~), *հասարակած* - «ինչ-որ բանի կենտրոնը, սահմանը նրա տևականության տեսակետից» (հատել~, անցնել~), *բուլ* - «ինչ-որ բանի կտրուկ զարգացում» (տնտեսական~, տուրիստական~, գրքի~), այդպես էլ կայուն բառակապակցությունները, ինչպես՝ *հելսինկյան ոգի*, ~ով - «միջազգային լարվածության թուլացման, ժողովուրդների բարեկամությունը բնութագրող բարոյական մթնոլորտ», *88-ի ոգի*, ~ով - «1988 թ. արցախյան ազատագրական շարժման տարիներին թևածող բարոյահոգեբանական մթնոլորտ»²², *սստեղային ժամ* - «ինչ-որ մեկի, բանի նվաճումների, հաջողությունների բարձրակետ» ևն:

Բառերի նման պատկերավոր վերաիմաստավորումները, թվում է, խախտում են լեզվական համակարգի կանոնավորությունը, բայց և այնպես նրանց հայտնվելը բառապաշարում օրինաչափ է և օբյեկտիվ՝ կապված լեզվական մեխանիզմի արտահայտչական գործառույթի հետ:

Այսպիսով՝ քննությունը մեզ բերում է այն համոզման, որ նորաբանությունների ի հայտ գալը միայն արտալեզվական գործոններով պայմանավորված չէ, և նորաբանականը միայն նոր երևույթների, իրողությունների (նեղ առումով) արտացոլումը չէ:

ЛУИЗА МЕЛКОНЯН – *Обстоятельства появления новых слов в языке.* – В статье говорится о разных принципах выделения новых слов, сравниваются разные точки зрения на новые слова в лингвистике в трудах как армянских, так и зарубежных (преимущественно российских) лингвистов. Затем были выделены лингвистические и экстралингвистические факторы возникновения неологизмов, а также тенденции, направленные на совершенствование номенклатурной системы языка, способствующие возникновению неологизмов. Предпринята попытка выделить наиболее характерное и всеобъемлющее определение новых слов со многих точек зрения, различая термины неология и новообразование,

²² Այստեղ առկա է նաև իմաստային ձուլումը (հմմտ. *հելսինկյան* (~ոգի) - «Հելսինկիի խաղաղության համաձայնագրի անդամ-երկրներ», *88-ի* (~ոգի) - «1988-ից ծայր առած հայոց համազգային՝ արցախյան շարժում»:

которые часто определяются неодинаково или иногда отождествляются. Рассматриваемые языковые единицы – слова – были объединены единым термином - неологизмы. Таким образом, основой для создания неологизмов служат действующие в языке различные новые явления, такие как:

- придание новых качеств старым словам,
- новые возможности словотворчества,
- создание новых слов с уже имеющимися лексическими моделями,
- тенденция экономии языковых единиц,
- тенденция к обобщению, регламентации (стремление дать общее название сходным явлениям, предметам, понятиям),
- в противовес тенденции регуляризации, генерализации существует также тенденция дифференциации, корректирования,
- придание эмоциональной выразительности уже известным явлениям.

Ключевые слова: *словарный состав, новообразование, лингвистические и экстралингвистические факторы, ocasionальные слова, словообразование, лексические модели, обобщение, экономия языковых единиц, выразительность.*

LUIZA MELKONYAN – *Circumstances of Emergence of New Words in the Language.* – The article refers to different principles of separating new words: comparing the different views of new words in linguistics in the works of both Armenian and foreign (mainly Russian) linguists. Then the linguistic and extralinguistic factors of the emergence of neologisms were distinguished, as well as the trends aimed at improving the nomenclature system of the language, which contribute to the emergence of neologisms.

An attempt has been made to distinguish the most characteristic and comprehensive definition of neologisms from many points of view, distinguishing between the terms neologism and neology (new structure), which are often not defined in the same way or are sometimes identified.

The examined linguistic units - words - were united under the single term neologisms.

Thus, various new phenomena operating in the language are the basis for the creation of neologisms, such as:

- Giving new qualities to old words.
- New means of word formation.
- Creation of new words with existing lexical patterns.
- The tendency of economy of language unit.
- The tendency to generalize, regulate (the desire to give a common name to similar phenomena, objects, concepts).
- As a counterbalance to the tendency to regularize, generalize, the tendency to differentiate (дифференциация), adjustment also works.
- Giving emotional expressiveness to already known phenomena.

Key words: *vocabulary, neology, linguistic and extralinguistic factors, occasional words, word formation pattern, regulation, economy of language unit, emotional expressiveness*